# Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանի շարունակական ուսուցման և հաճախումների ծրագիր

Սեպտեմբերի 2, 2020

Ներկայացնում են.

դոկտոր Մաթ Հիլլ, Շերոն Քուսեռ,

դոկտոր Ջոն Պարամո, դոկտոր Փիտր Քնապի

# Շարունակական ուսուցման և հաճախումների ծրագիր

- Կալիֆոռնիայի սենատի 98-րդ օրինագիծ
- Տեղական վերահսկողության հաշվետվողականության հետաձգված ծրագիր (LCAP)
- Շարունակական ուսուցման ծրագիրը փոխարինում է LCAP ծրագրին 2020–21 ուսումնական տարվա ընթացքում
- Շարունակական ուսուցման ծրագիրը հիշատակում է 2020-21 ուսումնական տարվա պլանավորման գործընթացը
- Ծնողների համար նախատեսված բյուջեի ակնարկը կընդունվի կրթական գրասենյակի կողմից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 15-ը:

# Շարունակական ուսուցման և հաճախումների ծրագիր

Պահանջվող տարրեր.

- Հեռակա ուսուցման և անձամբ դպրոց հաճախելու ծրագրեր
- Ուսուցման կորստի և գնահատման պատասխան
- Մասնագիտական վերապատրաստում բոլոր աշխատակիցների համար
- Սննդի ծառայությունների բաշխման ծրագիր
- Ուրիշի տանը ապրող, անօթևան և անգլերեն սովորող աշակերտներին օգնելու ծրագիր
- Սոցիալ հուզական և հոգեկան առողջության հնարավոր ծառայություններ
- Շահագրգիռ կողմերի ներգրավում  դպրոցի վերաբացման կոմիտեի միջոցով

# Շարունակական ուսուցման և հաճախումների ծրագիր
(ԲՈԼՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՀԻՄՆՎԱԾ ԵՆ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԵՎ ԳԱՎԱՌԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԻ ՎՐԱ)

- Հանրային լսումներ 2020 թվ. սեպտեմբերի 3-ին կայանալիք կրթական գրասենյակի ժողովի ընթացքում
- Առաջարկներն ուղարկել ReopeningSchool@burbankusd.org
- Որոշման ընդունում կրթական գրասենյակի կողմից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը
- Որոշումը հանձնել Լոս Անջելեսի գավառի կրթական գրասենյակին
- Որոշումը տեղադրել շրջանի կայքում

# 100% ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ – ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ (ընթացիկ մոդել)

- Աշակերտներն արձանագրված են իրենց բնակության շրջանի դպրոցում
- Աշակերտները բաշխված են շրջանի ուսուցիչներին և աշխատում են կրթական գրասենյակի կողմից հաստատված ծրագրերով. HMH *Go Math!,* Benchmark *Advanced* (անգլերեն լեզու), գիտություն, հասարակագիտություն, ֆիզկուլտուրա և երաժշտություն
- Լրացուցիչ ծրագրեր. BrainPop, StemScopes, Studies Weekly, NewsELA, iReady
- Գնահատվում են կրթական գրասենյակի ուղեցույցների համաձայն
- Երկակի միրձման կրթական ծրագիրը գործում է 100% հեռակա ուսուցմամբ

# 100% ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ – ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐ (ընթացիկ մոդել)

- Աշակերտներն արձանագրված են իրենց բնակության շրջանի դպրոցում
- Ուսումնական ծրագիրը սովորական դպրոցի ծրագիրն է
- Դասընթացները դասավանդվում են դպրոցի ուսուցիչների կողմից
- Մարզիկ աշակերտները կարողանում են միավորներ վաստակել, որոնք պահանջվում են քոլեջում սպորտով զբաղվելու համար NCAA-ի միջոցով: Կալիֆոռնիայի համալսարանն (UC) ընդունում է հաստատված ընթացիկ դասընթացները:

# ԱՆԿԱԽ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ (ILA)

- Բոլոր դասընթացներին կարելի է մասնակցել 100% հեռակա ուսուցման եղանակով:
- 7 – 12-րդ դասարանի աշակերտները կարող են մասնակցել:
- Դասընթացները կարելի է ավարտել 22 օրը մեկ, բայց կարող են արագացնել տեմպը ըստ իրենց կարողությունների և ցանկության:
- Ուսումնական ծրագիրը APEX-ն է, բայց ընտրովի դասընթացները սահմանափակ են:
- Սա ծրագիր չէ մարզիկ աշակերտների համար, ովքեր ցանկանում են քոլեջում սպորտով զբաղվել NCAA-ի միջոցով
- Աշակերտները պետք է պարտավորություն ստանձնեն սովորել ամբողջ կիսամյակի ընթացքում:
- Աշակերտներն ամեն օր կարող են շփվել ուսուցիչների հետ և հանդիպել շաբաթը մեկ անգամ:

# ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԴՊՐՈՑ

- Շրջանի հիբրիդ մոդելը կմշակվի կախված՝ հանրային առողջապահության և նահանգային կանոնակարգերից, ինչպես նաև Բրբենքի ուսուցիչների (BTA) և Կալիֆոռնիայի դպրոցի աշխատակիցների ասոցիացիաների (CSEA) համագործակցության օգնությամբ:
- Հավատարիմ մնալ նահանգային կրթական օրենսգրքին, ներառնելով նահանգային ուսումնական արձանագրությունները:

# ՀԻԲՐԻԴ ՈՒՍՈՒՑՈՒՄ (ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԴՊՐՈՑՈՒՄ ԵՎ ՏԱՆԸ)

## ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

- Անվտանգությունն ապահովելու համար միայն դասարանի աշակերտների կեսը միաժամանակ կգտնվի դպրոցում:
- Մուտքի բազմաթիվ դռներ ներս մտնելուց առաջ ստուգվելու համար:
- Սահմանափակ հավաքներ, ոչ մեծ սպորտային միջոցառումներ կամ համերգներ:
- Կտորե դիմակ և ֆիզիկական հեռավորության պահպանման անհրաժեշտություն:
- Մաքրել խմբերի ժամանումից առաջ:

## ԴԱՍԱՎԱԴՈՒՄ

- **ԱՌԱՎՈՏՅԱՆ/ ԿԵՍՕՐԻՑ ՀԵՏՈ** մոդել: Բաղկացած է դպրոցում և տանը կատարվող ուսուցումից:
- Բաղկացած է խմբակային և ինքնուրույն միջոցառումներից:

## ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

- Քրոմբուկ է հատկացվել այն աշակերտներին, ովքեր դրա կարիքն ունեն:
- Համացանցային կապ է հատկացվել այն աշակերտներին, ովքեր դրա կարիքն ունեն:
- Տեխնոլոգիական աջակցություն կարելի է ստանալ ԲԴՄՇ-ի կայքում տեղադրված հղումով, դպրոցում կամ հեռախոսով:

https://sites.google.com/burbankusd.org/instructionaltechnologyfamily/instructional-technology



**Հիբրիդ մոդելի իրականացումը կախված է Բրբենքի ուսուցիչների ասոցիացիայի հետ տարվող բանակցություններից :**

# ԾԱՌԱՅԵԼ ՀԱՏՈՒԿ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

| Անկարողունակություն ունեցող աշակերտներ | Անգլերեն սովորողներ | Ուրիշի տանը ապրող/անօթևան աշակերտներ |
|---|---|---|
| • Կարիքի համաձայն լրացուցիչ ժամ հատկացնել դպրոցում:<br>• Պլանավորել օգնել ֆիզիկական հեռավորություն կամ դեմքի դիմակ կրելու անհանդուրժողականություն ունեցող երեխաներին հսկելու համար:<br>• Ձեռք բերել պաշտպանիչ սարքեր օգնականների և մյուս աշխատակիցների համար, որոնցից են թափանցիկ միջնորմները քննությունն անցկացնելու համար:<br>• Պլանավորել շարժական սարքերը մաքրելու/ախտահանելու համար:<br>• Երեսի թափանցիկ վահանակներ հատուկ աշխատակիցների/ծրագրերի | • Կարիքի համաձայն լրացուցիչ ժամ հատկացնել դպրոցում:<br>• Ճանաչել կարիքները և առաջնահերթություն տալ յուրաքանչյուր կրթական մոդելում:<br>• Բոլորը դաղերը պետք է ընդգրկի ELD ուսուցում:<br>• Նախանշանակված ELD դաս պետք է հատկացնել ամեն օր և համապատասխանեցնել ELD չափանիշների հետ, որը կիրականացվի փոքր խմբերով:<br>• Երբ հնարավոր է, անձամբ իրականացնել նախանշանակված ELD դաս: | • Ճանաչել կարիքները և առաջնահերթություն տալ յուրաքանչյուր կրթական մոդելում:<br>• Ջանքերն ուղղել աշակերտներին անհրաժեշտ կրթական ռեսուրսներ հատկացնելու համար (հետևել հանրային առողջապահության կանոնակարգերին)<br>• Անհրաժեշտության դեպքում, կրթական նյութեր հատկացնել աշակերտներին:<br>• Համացանցային կապ հատկացնել թեժ կետի միջոցով:<br>• Աջակցել կրթական և սոցիալ հուզական կարիքները հոգալու համար: |

# ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿՈՐՍՏԻ ՔՆՆՈՒՄ

- Դպրոցները դասասենյակում անդրանդառնում են բացթողումներին և ուսուցման կորստին՝ միջամտությունների և քննությունների միջոցով:
- Յուրաքանչյուր դպրոց կչափի ուսուցման կորուստը անգլերեն լեզվի և մաթեմատիկայի քննությունների միջոցով
- Անգլերեն սովորողների քննում ուսուցչի կողմից
- Հատուկ ուսուցման քննում ուսուցիչների կողմից
- Ուսուցիչները կվերսկսեն գնահատել տառային թվանշաններով և հիմնվելով չափանիշների վրա, ըստ կրթական գրասենյակի կանոնակարգերի

# ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

- Գնահատականներ և քննություններ
- Հատուկ բնակչության խավի տարբերակում
- Տարրական և միջնակարգ կրթություն
- Համացանցային դասասենյակ
- Մասնագիտական վերապատրաստման ակտիվ կայք

# ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

## Հեռակա ուսուցում

- Աշակերտի հաճախումը (ներկա ստանալը) հիմնված է հեռակա հանդիպումների և ավարտած աշխատանքի վրա:
- Աշակերտի ներգրավվածությունը հսկվում է ամենօրյա համացանցային շփումով:
- Հետևել անկանոն հաճախում ցուցաբերող աշակերտներին աջակցություն ցույց տալու համար:

## Դասավանդում դասասենյակում

- Աշակերտն ամեն օր անձամբ է ներկա ստանում:
- Աշակերտնի ներգրավվածությունը հսկվում է միջոցառումների անձամբ մասնակցությամբ
- Հետևել անկանոն հաճախում ցուցաբերող աշակերտներին աջակցություն ցույց տալու համար:

# ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ ՀՈՒԶԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

- Դպրոցի խորհրդատուներ
- Դպրոցի միջամտության մասնագետներ
- Բրբենքի ընտանեկան ծառայությունների գործակալություն
- Դպրոցի ադմինիստրատորներ
- Աշակերտական ծառայություններ
- Ռեսուրսների պահեստավորում
  - «Կորոնավիրուսի թվային ռեսուրսների կենտրոն աշակերտների և ընտանիքների համար»
  - https://www.burbankusd.org/COVID-19

# ԴՊՐՈՑԻ ՄՆՈՒՆԴ

- Սննդի բաշխում յուրաքանչյուր դպրոցում ուրբաթ օրերին
- Առավոտյան ժ.8:30 – կեսօրից հետո ժ.12:30
- Ծնողը կամ այլ չափահաս անձը կարող է սնունդ վերցնել ընտանիքի համար
- Անվճար և զեղչված գնով սննդի դիմումնագիրը հասանելի է ներքոհիշյալ կայքում.
  - https://family.titank12.com/

# ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

- Տարրական և միջնակարգ դպրոցների արտակարգ իրավիճակի ֆոնդ (ESSER) -

  **$1,271,719**

- Ուսուցման կորստի մեղմացման (LLM) LCFF և լրացուցիչ հիմնադրամների համակցում –

  **$5,091,269**

- Ուսուցման կորստի մեղմացման (LLM) Հատուկ ուսուցման հիմնադրամ –

  **$3,792,482**

# COVID դաշնային ֆոնդի դրամով վճարվելիք առաջարկված ծախսեր

- Քրոմբուկներ
- Թեժկետեր
- Լրատվական միջոցների և տեխնոլոգիայի աշխատակիցների հավելավճար
- COVID հեռացման ֆոնդ
- ASES երեխաների խնամքի երկարացված ժամեր
- ATB երեխաների խնամքի երկարացված ժամեր
- Անձնական պաշտպանության սարքեր
- COVID հեռացման մասնագետ (կես դրույքով)
- Ուսուցման կորստի մասնագետ (կես դրույքով)
- Տեխնոլոգիական տեխնիկի պաշտոն (կրճատվել էր անցյալ տարի)
- Հատուկ ուսուցման կրթության կորստի աջակցություն
- Ուսուցիչների համար նախապատրաստական ժամ դպրոց վերադառնալու համար
- Տարրական դպրոցի միջամտություն
- Միջնակարգ դպրոցի միջամտության բաժիններ

# Հարցեր ունենալու դեպքում օգտվել էլեկտրոնային նշված հասցեից.

- Re-openingSchool@burbankusd.org